Բայց այս մի եւ նոյն տոհմից ունինք եւ ուրիշ նուիրատուներ. նախ քոյրը՝ Թաճմըլք, Սանճարի հետ, որ ամուսինը պիտի լինի, միաբանում է Ս. Ստեփանոսին և նուէր տալիս Կկուաքարի հողը Հովվենց հողով եւ հինգ ժամ ստանում. օգնել է նաեւ «Կատվհատնեաւ» (Ա. 156, պատկ. 186)։ Այս արձանագրությունը գտնւում է Խութլուբէկի արձանագրության տակ եւ նոյն գրչով, որով եւ կողմնակի կերպով նրանց ժամանակակցությունն ու ազգակցությունը հաստատւում, մանաւանդ հետեւեալ արձանագրությամբ. Թաճմըլք «դուստր Մխիթարա, թոռն Խալաշահի» մի «վեցկի» (արօր) է տալիս իւր գերեզմանատանը եւ չորս ժամ ստանում Սանկիստոյ տօնին, երկուսն իրեն եւ երկուսը մօրը (Ա. 157)։ Նոյն տոհմից՝ Խութլուբէկի եղբօր կնոջ՝ Աւագ խաթունի արձանագրությունն ունինք ՁԿԲ թուականից. «Եւ Աւագխաթունս ամուսին Վաղթանկա որդո Խալաշահի» նուիրում է հարիւր դեկան եւ ստանում չորս օր պատարագ (Ա. 158, պատկ, 60). արձանագրությունը գտնւում է արեւմտեան դրան քառանկիւնի շրջանակի ճակատին (*)։



Պատկեր 185.

(*) Մի անթուական արձանագրություն ևս ընկած է գիւղում, Աբդուրահման Ամիր օղլիի տան մօտ, Խալաշի դուստրը Խաթունի անունով, որ քառասուն դեկան է տուել (Ա. 172). եթէ Խալաշի Խալայշահի կրճատ ձևն է, սրան Խութլուբէկի հօրաքոյրը պիտի համարենք։ Նոյնանուն մի անձն